# ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

# Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան "17" հունիսի 2009թ

## Հ Ր Ա Մ Ա Ն № 19-Ա/Ի

### ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով տնտեսական համագործակցության հարցերով հայ-ուկրաինական միջկառավարական համատեղ հանձնաժողովի 2009 թվականի հոկտեմբերի 16-ին կայացած 4-րդ նիստի արձանագրության 4-րդ կետը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 1269-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի կանոնադրության» 12 –րդ կետի 4-րդ ենթակետը՝

### Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Գիտական և գիտատեխնիկական համագործակցության ոլորտում հայ-ուկրաինական համագործակցության 2010-2012 թթ. ծրագրի մշակման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.

| | |
|---|---|
| 1) Լևոն Մարդոյան | ՀՀ ԿԳՆ ԳՊԿ գիտական գործունեության կազմակերպման վարչության պետ (աշխատանքային խմբի ղեկավար), |
| 2) Յուրի Շուքուրյան | ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, |
| 3) Գեղամ Գևորգյան | ԵՊՀ պրոռեկտոր, |
| 4) Սուրեն Աղբալյան | ՀՊՃՀ պրոռեկտոր: |

2. Աշխատանքային խմբին՝ մինչև ս.թ. հունիսի 30-ը քննարկել ու ներկայացնել հայ - ուկրաինական համագործակցության շրջանակներում գիտական և գիտատեխնիկական համագործակցության գերակա ուղղությունները, համագործակցության զարգացմանն ուղղված համատեղ միջոցառումների անցկացման հնարավոր ուղղություններն ու ժամանակացույցը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ